


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ծրք 10
Վեցամսեայ » 5
ԻԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Ծրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հարաք օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ: Երկու ք/ու ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիմ:
Զհրատարակուած գումարի նր ետ յսրուիր:

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՅԹԱԿԱԿԱՆ

ՓԵՍԱՑՈՒ ՏԵՐՏԵՐԸ

«Մարդ է որ գործէ գեր-
կիր եւ զԵԵՅՐԱՆՑ պեղիւ»
ԲՈԺՈԺԻԿ

Վերջերս՝ Պուլկարիոյ Հայաշատ քա-
ղաքներէն մէկուն Եկեղեցիին մէջ 17 աա-
րիններէ ի վեր պաշտօնավարող տէրտէրի մը
երէցկիւնը հիւանդանալով կը մեռնի, քահա-
նային մօքին մէջ ալ նորէն կարգըւելու գա-
ղափարը անսիջապէս կը ծնի, ըստ բանին՝
թէ «ապա եթէ մեռանիցի՝ բազում ար-
գիւնս առնէր: Եւ որովհետեւ իր նպատակին
հասնելու համար պէտք էր գործել, զի «մարդ
է որ գործէ գերկիր և ըզէյլթան—պէղին»,
կը տարաձայնէ որ ինքը չի կրնար առանց
կնոջ ապրիլ և թէ Գեր. Վ. Վարդապետի
միջոցաւ հեռագրած է որու որ անկ է ու
կարգըւելու հրամանը ստացած՝ յաւէտ թող-
լով քահանայութիւնը:

Յիշեալը ի նպատակ գաղթականաց դը-

րամ հաւաքելու համար անցեալները Պ...
քաղաքը կը շրջուի, ուր մէկ քարով երկու
թուշուն բռնել ուզելով կը յաջողի 15,000
Փրանք դրամով աղջիկ մը գտնել. ասկէց
զատ՝ մէկ երկու անարծաթ բժիշկներէ վը-
կայագիրեր ալ ծախու կառնէ, յայտարարող
թէ՝ իր ունեցած 2—3 զաւակներէն չի քաշ-
ւելով ու մանաւանդ քահանայ ձեռնադրուած
պահուն «Հրաժարելով հրաժարիմ ամենայն
աշխարհային ցանկութենէ», յատենի Եկե-
ղեցոյ տուած հանդիսաւոր խոստումը առ ո-
չինչ համարելով պէտք է ամուսնանայ, ապա
թէ ոչ՝ պիտի մեռնի՝ եղեր: Այս վկայա-
գիրները ծոցը դնելէն ետքը Պ... քաղաքէն
վերադարձին՝ ալ առանց քաշուելու կը յայ-
տարարէ ամենուն թէ պիտի կարգըւի կամ
կարգը կատարուի, ու տեսնելով որ ժողովրդին
կողմէ ծաղու մատնուած է՝ հետեւեալ հրա-
ժարագանը կուտայ:

«Հրաժարիմ ի քահանայութենէ և ա-
մենայն տէրտէրական պաշտօնէութենէ. նորա,
ի խալքախէ նորա, ի փիլոնէ նորա, ի վը-
րարկուէ նորա, յողաթափէ նորա և ամենայն
մանրամասնութենէ նորա հրաժարելով հը-
րաժարիմ:

«Հաւատամ՝ զի եթէ չամուսնանամ՝

մեռանելոց իցեմ, ուստի սոյն պատճառաբանեալ հրաժարականն իմ մատուցանեմ, որ եթէ ընդունելի ոչ դասեսցի ի Պատուարժան Խորհուրդէդ՝ որոշած եմ թողուլ զխալբա-իւրն և զվերարկուն՝ եւ տմուսնանալ ընդ օրիորդին 15,000 Փրտնքեան, որով մէկ ձայնով ազատած լինիմ թէ կաթողիկոսական իրաւասութենէ եւ թէ ժողովրդեան արդարացի ծաղուն մատնուելէ ։

✱

Ապրիլ 4ին գումարուած Ընդհ. Ժողով մը կ'որոշէ տերտերին հրաժարականը ընդունիլ եւ անոր փափագին համեմատ ձեռքը կուտայ վկայագիր մը, յայտարարող թէ՝ 17 տարիներէ ի վեր բարւոք պաշտօնավարութիւն մը ունեցած է ։

Ըստ մեզ՝ ասանկ վկայագիր մը՝ քահանայութիւնը իր անյագ ցանկութեանցը խաղախը ընող մարդու մը ձեռքը տրուելու էր ։

Ու Հայ ժողովուրդը եթէ տակաւին քահանայութեան օրինաւոր տարիքը չունեցած երիտասարդներուն համար «արժանի» է՞ պուռլով զանոնք քահանայ ձեռնադրել հրամայէ՞՝ այսօրինակ գայթակղական դէպքեր շատ պիտի լսէ ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՀԱՅԵԼԻ»

Վառնա 16 Մայիս

... Խմբագիր «Հայելի» լրագրոյ
Բարեկամ.

Մեր ազգային պակասութիւններն՝ որոնք այսօր ամէն ժամանակէ աւելի աչքի կը զարնեն, և որք ձաղկուելու և խարաղանդուելու պէտքն ունին. ոչ պակաս ուրախութեամբ կը տեսնեմ թէ դուք հրապարակ կ'ընէք կրկին և «Հայելոյ», երեւթով կը գայք այդ դժուար ու զկեծուցիչ դերը ստանձնելու ։ Սրտանց կը շնորհաւորեմ Ձեր այդ ձեռնարկ

ու կը մաղթեմ որ յորատեութեամբ օգտակար լինիք մեր թշուառացեալ՝ այլ սակայն ընդ միշտ սիրելի ազգին ։

Ըսի թէ՝ դժուար և զկեծուցիչ դեր մը ստանձնած էք. արդարեւ պատերազմի դաշտին վրայ անձնանուէր կամուորի պէս ամենէն վտանգաւոր դիրքին առաջ կանգնելու յանգեալութիւնը գործած էք. սակայն մի՛ վախճաք Ձեզ դէմ մլուած պաքներէն, արհամարհեցէ՛ք այն ամենքն, այլ սակայն միշտ անաչառ ու անկաշառ եղիք հաստատ գիտակցութեամբ թէ՝ յաղթանակը Ձեր ափին մէջն է ։ Մասնացոյց ըրէք ազգային վերքերն, ձաղկեցէք պակասութիւններն, անպարկեշտ վարքերն, խաբեբայութիւններն ու խայտառակութիւններն՝ իրենց բոլոր մերկութիւններով ցոյց տուէք Ձեր «Հայելի»ի մէջ կտրիճ վիրաբուժի մը պէս անողոր և անգութ եղիք պահ մը, խլացէք ու մի՛ լսէք ձիւ, աղաղակ, հայհոյանք և մինչեւ անգամ մօ-ՏԱՍ դարձած թէրօրիւս սպառնալիքներն. պատուեցէք, ձեզքեցէք պալարներն, ուլունքներն եւ մաքրեցէք խոցերն ու քոսերն ազգային վերքերուն. այս է Ձեր պաշտօն ու կոչում. հանգուցեալ Յակոբ Պարոնեան իր երգիծաբանութեանց ամենէն զկեծուցիչ դառնութեանց մէջ իսկ անմոռանալի եւ անմահ է ։ Պարկեշտ եւ ուղղասէր հասարակութիւնը Ձեզ հետ է միշտ ու կըլէ Ձեր արժէքը ։

Յ. ԶԱԲԸՐԵԱՆ

— Ի Բ Ե Դ Ե Դ Ե Դ Ե Դ —

Կ. Պոլիս 12 Մայիս

Բարեկամ.

Անցեալ շաբթու Ռուսիոյ կայսեր կողմէ Սուլթանին հեռագիր մը ուղղուած էր, որով ներկայ պատերազմին մէջ թրքաց վաստը կած յաղթութիւնը բուռական համարելով՝ զինադադարի մը հրամանը տրուած ըլլալուն համար իւր խնդակցութիւնը կը յայտնէր ։ Այս հեռագիրը ամբողջ պաշտօնական մարմ-

նոյն սրտի կոտորածով թիւն պատճառներ է, վասնզի յայտնի կերեւի թէ Ռուսիոյ կայսրը պիտի միջամտէ խաղաղութեան պայմանները ստորագրուած ատեն ու չի պիտի թողու որ տաճկաստան ուղածին պէս յունաստանէն պատերազմական տուգանք եւ երկիր առնէ. թուրքերը սա համոզումը ունին թէ՛ Ռուսիա որ խոստացած է պատերազմական տուգանքը երաշխաւորել՝ իր տաճկաստանի վրայ հինէն ունեցած անգանձելի պահանջքէն նոյնչափ գումար մը վար պիտի իջնէ, որով՝ «հէմ՝ գաղան թէմիլլէնէճէք՝ հէմ՝ բիլավ եաղլանաճագ» . այն ատեն տաճկաստան իր ձեռքն ունեցած պատրաստ դրամը պատերազմին համար ծախսելով վրայ տուած պիտի ըլլայ : Թուրքերը կը տրանջան թէ ինչո՞ւ Եւրոպեան տէրութիւնք ճնշում կը բանեցնեն իրենց վրայ, կը տրանջան նաեւ Սուլթանին յաղի հանգիստնալէն ետքը Չարին առջեւը գլուխ ծաւլուն համար. ինչո՞ւ որո՞ւմ են իրենք, դեմերին եղողը հայերը ու յոյները կը կարծեն . :

*
* *

Ղալաթիոյ—Բերայի կողմը հսկողութիւնը կրկնապատկուած են. հեծեալ ոստիկանք փողոցները լեցուած են ու շատ անգամ ազատ անցուդարձին արգելք կըլլան. ձիերուն ոտնաձայնէն բնակիչք միշտ, մանաւանդ գիշերները շատ անհանգիստ են :

Հայք եւ Յոյք յանցաւորի պէս կանցնին փողոցներէն. աեղ ուեղ թուրք սրճատաններու առջեւ աթոռակներու վրայ նըստած են քուրտ եւ թուրք սրիկաներ, որոնք անցեալ տարուան կողոպուտին շնորհիւ հագուած սգուած՝ եւ ձախ ուսերէն մէկ կանգուն երկայնութեամբ ոսկի շղթայով ժամացոյց կախած՝ նորոգիչները բերաննին կազմեւ պատրաստ կ'սպասեն : Եթէ քրիստոնեայ մը առնց առջեւէն անցնի՝ անարգալից խօսքերու տարափէ մը կը բռնուի :

ԲԻԿՄԱԼԵՕՆ

ԹՂԹԱՏԱՐ



ՀԱՅԵԼԻ

Առ Պ. Անանուն ի Ռուսճուգ. — Բարեկամներ զձեզ գրասէր կարծելով՝ առաջարկեր էին մեզի «Հայելի» շրկել, մենք ալ համակերպեցանք. հիմա հասկցուեցաւ որ դուք ոչ թէ գրասէր՝ այլ մուրասէր էք եղեր, զի «Հայելի»ի 5 թիւերը ընդունելէ ու կարգաւէ վերջը ձեռք չառնուելու աստիճան աղտոտած ու մրոտած վիճակի մէջ զանոնք մեզ կը վերադարձնէք : Կը մաղթենք որ մարդ ըլլաք, բայց ոչ ձեք հասկցած կերպով թէ փարայով մարդ կըլլուի :

Առ Պ. Պ. Զ. — Անցած կիրակի իրիկուն Բանագոյին պարտէղին մէջ հաւաքուած երկսեռ բազմութեան ներկայութեանը ցոյց տուած մէկ արարքովդ՝ ախոռի մէջ կրթուած ըլլալդ հաստատեցիր : Վայելց . . :

Առ Պ. Մ. Ե. — Ծախուելիք մարդ չենք. 2—3 բաժանորդագին չի կորսնցելու համար չենք կրնար գործիք ըլլալ ու զեզծումը պաշտպանել. մեզ ճանչցողները գիտեն թէ առաջուց ի վեր ժողովուրդին շահը մեր անձնական շահուն նախադասած ենք, եւ ասոր համար անոր համակրանքը կը վայելենք :

Առ Պ. Գ. Այբեան. — Ապառնալիքէ չենք վախնար, մի՛ ընէք որ չի խայտառակիք. ձեզ նման ԱՕՓՈՂ ազգասէրներ շատ տեսանք, որոնք վերջ ի վերջոյ գացին խաւովի եղան, ինչ գիտնանք որ դուք ալ այն կարգէն չէք :

Առ Պ. Տ. ի Ֆիլիպէ. — «Հայելի»ի բաժանորդագինը կանխիկ է. շրկեցէք զայն որ մենք ալ շրկենք թերթերը :

Ձուարճալիք

ՀԱՃԻ ՀՈՌՈՓ ԽԱԹՈՒՆԻՆ ԿՏԱԿԸ
(Շար. եւ Վերջ)

— Հիմա գանք անտուկիս: Ճէճէգէս մնացած էրիւ սէվայի էնթարի:

— Երկուս անթէրիս սեայի դիպակօք, որ ի հնումն իւրոյ ճէճէգէ մնացեալ է:

— Իրեք բամպակ միսօ կարմիր էրեսով:

— Յերիս միսոյս բամպակեղէնս կարմիր պատեալ յերեսն:

— Կարմիր պատի էրես չէ . . .

— Գրաբառ ասանկ կըսուի:

— Իրեք հատ արծաթ գաւ:

— Յերիս դգալունս արծաթեայ:

— Արծաթ թաքունեա չըսի:

— Հաճի խաթուն, ես իմ գրածս գիտեմ. քանիկա՞ն տիրեմ է, դուն անիկայ ինծի ըսէ:

— Իննական տիրեմ:

— Յիննական տրամս, որ գումարի՝ . . . որ գումարի . . . հա՛, գտայ, քսան և եօթն տրամս կշռեցելոց:

— Ամաւո՞ւրք կը կարգաս ի՞նչ կընես տէր պապա:

— Զէ՛ ճանրմ, շարթլը շուրութլու կտակ կը գրեմ կոր, կէնէ պէյէնտիրեմէյօրըզ:

— Ո՛ւյ օղջ ըլլաս տէր պապա, անոր համար չէ իմ ըսածս, սանքի կռաբար չեմ հասկնար տէ՛ պէլքի ասմաւուրքէն բան մը կրեցիր մէջը տէյի հարցուցի:

— Զէ՛, անհոգ եղիր. դուն տահա ի՞նչ ունիս նէ ան ըսէ որ գրեմ:

— Թօփ մը ֆէրմայիշ շալ, լալէ չիչէի չուպուխլու:

— Թնդանօգ մի ֆէրմայիշ դիպակ ինչ, Կակաճաճողիկ գաւազանաւ:

— Աս կիտնալս բէք խօյի կռաբար կոցիր տէ՛ վախնամ եքիւ չի հասկնան:

— Մէռաբգ էլլայ կնի՛կ, թող որ գիտցածս գրեմ, . . . պաշխա՞:

— Իրեք եազմա, խանտիլլի իշի, մենծ պօյեն:

— Երիս մի՛ գրերս, կանգեղագործս մեծաւ հասա՛լաւ:

— Քեթիպ պէյզասի արծաթ այնա մը:

— Մի արծաթեայ հայելի, գրագրի հաւկթաճէ իմն:

— Վատծուն տիրեմ խաս թէլիէչէ:

— Վաթսուն տրամս թէլունս հարսանեկանս խասըս:

— Երկու հատ կլօխը սրմա ճուրքով էրեսի խափլու:

— Երկուս . . . հիմա ասոր ի՞նչ ըսելու է . . . հա՛հ գտայ, երկուս ըզգլուխսըն ոսկեթելս ասեղնագործեալ զիմասրբիչս:

— Ո՛ւյ, շիտակը ի՞նչ մեղքս պահեմ, քեզ ասխտար կիտուն չիյտէի. վեց աղարեայ կարգացե՞ր էս:

— Քիչ մը, ֆախաթ էրդումով եմ, չեմ նայիր. հայտէ նայինք, պաշխա գրելիք ի՞նչ կայ. ըսէ՛:

— Զիֆթ մը արծաթ կլապտան պուհուրտան՝ տամղալը:

— Զոյգ մի արծաթեայ ըզկլապտան պուհուրտան՝ դրոշմեալս:

— Զարիս իշի պաղնիքի թաս մը, չիֆթ մը իշլէմէլի պաղնիքի նալըն:

— Անուանակերտ ջրագաս մի պղնձեայ և զոյգ մի պայտամոյիս տախտակունս վասն բաղանեաց:

— Տալըջս տղուն քով ունեցած իրեք շմէնտըֆէռի թուղթս:

— Զտալըջն որդեկին երիս թուղթս շմէնտըֆէրիականս:

— Սնտուկիներս ասոնք են իշթէ:

— Պաշխա բան մնա՞ց:

— Հա, երկու քէօմիւրի էլէկ:

— Երկուս ելէկս ածխագոյնս:

— Տէր պապա, ածխագոյնս ի՞նչ ըսել է:

— Սէ ըսել է:

— Մեղայ, ինչո՞ւ սե ըլլան, տահա նորմընոր էն:

— Ես ալ հին է չեմ ըսեր կոր:

— Ադ պաշխա :

— Ելէկին ըրէնկը հասկցնել կուզեմ :

— Քա ճանըմ, ելէկ չէ, ելէկ, ելէկ :

— Տեսա՞ր օրհնած, ինծի ալ շաշրդ-
միշ ըրիր. հէմ ասանկ երկայն պիտի ըլ-
լայ. դուն ինչ ունիս չննիս ներոջդ թողուլ
չե՞ս ուզեր :

— Հա ես վրում, հա, սա հարսըս
պան մը չուտէ տէ՛ ինչ կըլլայ ըլլայ :

— Հասկցուեցաւ, արթընս դուն ինծի
ձգէ :

“ Ի միջի կտակոյ գրեալս և ի միջոյ
կտակէ դուրս մնացեալս, յերևութից և ա-
ներևութից զամենայն գոյքս իմ թողեալ եմ
ներոջս իմոյ և հարսն իմ ոչ կաբողանայցէ
եւ ոչ ըղչէօք մի իսկ առնուլ . . . :

— Եանի սա ասեղ մը առնէ կայ ես՝
անդենականը երկու ծառքս ետսան ըլլայ :

“ Եւ քանզի ազատ կամօք և լուրջ խոր-
հրդածութեամբ պատրաստեալ է կտակս այս,
ոչ որ համարձակեսցի ասել թէ ցնդածութիւն
ինչ խանգարեալ է զմիտս իմում, որոյ եւ
եթ փառք ի բարձունս զանպակասեաց մինչ
խապառ. ամէն :

“ Գրեցաւ կտակս այս ի թուին հայոց
ՌԹԻՆ և յամենանն Արեգի իբ եւ Մարե-
գի Ժըբ ” :

— Հիմա աղէկ չեղա՞ւ :

— Մէյ մը վերէն վար կարդայի՞ր ա-
ճապտ :

— Օրհնած, ատ ըսածդ բէք զօր բան
է. հիմա դուն աս կտակը անտուկիդ մէջը
դիր պահէ, աղօթքիդ մոլխայէթ եղիր ը-
ռահաթ ըրէ. արթընս մնաս բարով. տէր
ընդ քեզ :

— Էրթաս բարով տէր պապա, օղջ
ըլլաս : Նիշանիկիս հետ Ժամուցդ վաղը քե-
զի կը խաւրեմ :



ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

Պիր բաղարըլը.

Տիւնքի ճումաս կիւնի պիր զաթ՝ վառ-
նանըն Մուսալլա պաղչէսինին եանընտաքի
սօհաբտա տուրմուշ վէ եէնի սաթըն ալմըշ օլ-
տուղու պիր կիւղէլ Փայթօնու գուլլանմագ-
տա օլան թաթար արապաճըլլա շու եօլտա
պիր բաղարըլգաա պուլունընօր իտի :

— Արապաճը, Բաղարճըղա կէլին ալ-
մաղա կիտէրմիսին :

— Ղատէրիդ պէ՛ :

— Նէ՞ իսթէյօրսըն :

— Ղա՞ն առապա օլաճախ :

— Իքի արապա թուլթմուշըմ, պիր տէ
սէնին արապան՝ էլվէրիր :

— Բէք իսլահ :

— Նէ՞ վերէճէիդ :

— Ղըրիս լէվ :

— Զօգ տէյի՞լ մի :

— Տէղիլ :

— Խարըն սապահ սաաթ 7 տէ եօլա
չըգաճաղըլ՝ բաղար կիւնի տէ պուրայա եէ-
թիշէճէիդ :

— Բէք իսլահ :

— Ֆագաթ պուլետան պաղգա եէնի օ-
լարագ րուպան վա՞ր մը :

— Պուլունուր . . . պիր շէյ ետ-
բարըն :

— Էջլէ իսէ րուպանը կիւղէլճէ կի-
յինմէլիսին. թրաշ տա օլաճադսըն. սաչարը-
նը կիւղէլճէ աիւղէլթմէլիսին. պուֆէս օլ-
մալ հա՛, պիր տէ եէնի ֆէս ալմալըսըն. եէ-
նի չիլմէ կիյէճէքսին, չիւնքի կէլին առապա-
սը սէնինքի օլաճագ. վէ . . .

— Զօրպաճը պէն բաղարըլըստան ճայ-
տըմ, ղիտէմէմ :

— Նի՞չիւն :

— Կէլինի պէն ալաճախ տէղիլիմ, կօ-
րէն կօրմէյէն՝ կուվէյի պուտըր տէյէճէխ-
լէր :

ԿԱՐԵՒՈՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

(Շար. եւ վերջ)

ԲՈԺ. — Եկուր նայինք օրհնած, ծունկ
չորէ ու խղճիդ դպած մեղքերդ խոստովանէ:

— Ծառայ եմ հայր Բոժոժիկ, եկեալ
եմ ի խնդիր քաւութեան եւ թողութեան ծո-
վացեալ մեղաց իմոց:

— Հասկցանք, հէմ՝ աշխարհաբառ
խօսէ:

— Այո՛, հայրդ որբոց եւ քաւիչ մեղաց,
չին ինձ ներելի մոռա գործել յաշխարհէն
գրաբառի, զոր երբեմն մոռեալ յայտարարե-
ցի. սակայն գիտելով զի ի քաւութիւն մեղաց
առն բարեպաշտի հարկ է եւ արտասանել զմեղս
իւր ի գրոց բարբառ, վասն որոյ...

— Աս ի՞նչ պէ՛յնամաղ մարդ ես եղեր.
աշխարհաբար խօսէ:

— Լաւ, բայց ես երախտագիտական
պարտք մը կատարելու համար ի փրկութիւն
մեղաց իմոց գրաբար ճառ մը կուզեմ՝ արտա-
սանել:

— Հիմա տառնկ բաներու տառնը չէ,
օրն իրիկուն կըլլայ կոր. ե՛րբ պիտի խոստո-
վանիս:

— Բայց ես կը փափաքէի որ քանի մը
օր հոս կենամ, վանքերնուդ գործերը ըն-
թացիկ վիճակի մէջ գնեմ, եւ Խւրդպական
շահաբեր դրութեամբ մը ներքին կանոնադիր
մը շինեմ ու...

— Աղբար, գուն հոս մասա՞լ ըսելու
եկար մի՛ խոստովանելու:

— Խոստովանելու:

— Է հայտէ նայինք: Սա բալթօդ մէյ
մը կոճկէ, բարե բռնէ, գլուխդ խոնարհե-
ցուր ու ըսէ.

— Ի՞նչ ըսեմ:

— Մեղքերդ:

— Ո՛ր մէկը ըսեմ, ցանկ մը շինեմ ձե-
զի տամ նէ չըլլար:

— Ես ցանկ մանկ չիյտեմ, նոր բիւրիւղ-
ներ մի՛ հաներ. պիտի ըսես նէ ըսէ:

— Այնչափ շատ է որ չեմ կրնար կոր
միտքս բերել:

— Կեցիր. «հայր մեղայն գիտես նէ
ան ըսէ, ամենքն ալ մէջն են, կազատիս
կերթայ:

— Գժբաղդաբար առիկայ ո՛ւր ծա-
խելին չի գիտէի որ...

— Վա՛յ կիտի կրող կարգացող վա՛յ-
ինչ է նէ, ես ըսեմ՝ դուն ալ հետս ըսէ:

— Շատ աղէկ:

— Ըսէ մեղայ Աստուծոյ:

— Մեղայ Աստուծոյ:

— Մեղայ ամենասուրբ երրորդութեան,

— Մեղայ ամենասուրբ երրորդութեան,

— Մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ.

— Ո՛րչափ ալ ճշմարիտ ըսեր է.

— Սո՛ւս մեղադ ըսէ:

— Բայց հայր Բոժոժիկ, կը ցանկամ
որ առիկայ մէկը չիմանայ:

— Սո՛ւս ըսի. ասանկ խոստովանու-
թիւն չըլլար, հասկցա՞ր, ըսէ՛ մեղայ խոր-
հրդով բանիւ եւ գործով.

— Ո՛վ երկինք, ի՞նչ կը տեսնեմ:

— Նորէն ի՞նչ կըլլաս կոր:

— Այս պարագայիս մէջ կը ըսեմ սա
երկնային խօսքը, «Թոյլ տուք մանկանցդ
գալ առ իս», այնպէս չէ՞ Գեր. հայր Բո-
ժոժիկ:

— Օ՛Ֆ, ա՛լ պըխմիշ եղայ. հոս Աստ-
ուածաբանութիւն դաս տալու եկար չէ նէ
խոստովանելու:

— Խոստովանելու, ըսինք ա՛:

— Ուրեմն մեղադ շարունակէ:

— Մեղայ՝ կողոպուտներովս, մեղայ՝
մարդակործան մեքենայութեամբս, մեղայ՝
անմեղ ազգ մը դաւաճանելու աններելի յան-
ցանօք մեղայ:

— Հա շէջլէ, աֆէրիմ:

— Կեցիր, բան մը կզգամ կոր:

— Ի՞նչ:

— Փաստաբանական կաճառէն կը կան-
չըւիմ կոր.

— Կէնէ սաբըթմիշ ըրիր:

— Ո՛չ, ո՛չ:

— Ասանկ պիտի ընես նէ՛ պոչէդ բըռ-
նածիս պէս դուրս կը նետեմ:

— Ես անասուն եմ որ . . .

— Երանի թէ անասուն ըլլայիր:

— Ամա՛ն, օ՛ֆ, Աստուած իմ, ո՛ր
փախչիմ:

— Եղբորդ պախալին խանութը փա-
խիր:

— Կերիմ կոր, օգնութիւն:

— Աստուած լսէ ձայնդ:

— Բաբէ՛, պայծառ արեւը տէքիս գէմ
կը խաւարի. երկինքը մթագնեց, երկիրը
ոտքիս տակ կը շարժի:

— Ի՞նչ, շարժ պիտի ըլլայ մի:

— Ո՛չ, ո՛չ, անանկ բան չի կայ:

— Սառա՞ ունիս, ի՞նչ ունիս:

— Թողէ՛ք, թողէ՛ք որ փախչիմ:

— Ի՞նչ կըլլաս կոր:

— Տը՛, տը՛, տը՛, բը՛, բը՛, վը՛, վը՛:

— Հէ՞:

— Բը՛, բը՛, վը՛, վը՛:

— Աստուած շատ քաշել չի տայ:

— Սեւագետ դաշտեր, բացուեցէք
ու զիս կուլ տուէք:

— Չեմ խառնուիր, կը կապեն հա՛:

— Մտիկ ըրէք:

— Կընենք կոր:

— Ահա կուգան, ո՛վ սոսկմանս, ի՞նչ
կը տեսնեմ, նիզակի վրայ ցցուած մատաղ
մանկունք, յոշոտուած կտրիճ երիտասարդք,
պղծուած ու մորթուած անմեղ աղջկունք ու
ոտնակոխ եղած ալեւոր Ծերունիք շուրջ շար-
ուեր սոսկում կուտան ինձ . . . չորս կողմէն
արեան լճակը կը հոսին և զիս պիտի խեղ-
դեն . . . Լսեցէք անոնց արգար բողբոջ. «Ո՛վ
իրաւանց և գթութեան Աստուած, ոչ այն-
չափ մեր անօրէն մարդասպաններն՝ որչափ
այս անփութարկին չարեաց պատճառ ան-
գութ մատնիչներն պատժէ՛, որ մեր արեան
հոսանացը մէջ թուրքին հետ իրենց նա-
ւագը ու աղօթքը կատարեցին, մին դռնաւոր
և միւսն խաչի պատրուակին տակ . . . »: Աստ-
ուած իմ, ա՛ռ հոգիս. ոտքիս տակ բոցափրո-

ւոր դժոխք մը բացուեր է. բաբէ՛, որչափ
հղորագոյն է անմեղին արտասուքն ու հառա-
չանքն, որ թէև ուշ՝ սակայն կայծակի նման
կը սրանայ ու կուգայ կը մթնի դաւադիր ու
շահամոլ սրտերու մէջ: Ա՛հ, վա՛շ, վա՛շ,
գթութիւն, գթութիւն . . . կը պապակիմ,
գոնէ գաւաթ մը ջուր . . .

Խոստովանորդին այս ըսաւ եւ թանձր
փրփուրներու մէջ փռուեցաւ շնչասպառ.
հայր Բոթոթիկ ալ ձեռքը ոտքը դող ելած՝
փիլոնն ու խալբախը մէկդի նետածին պէս՝
— Պէ՛ն պու տէյիրմէնին պէկիրի տէյիլիմ—
ըսելով՝ աներեւոյթ եղաւ:

Թ. Շ.

Երկու սրտակից պարոններ

Ինծի նայէ կադմոսիկ, ադ ձմեռ
ւան հագած հին բալթօդ ե՛րբ մէկ կողմ
պիտի նետես. ամօթ է:

— Ի՛նչ ընեմ ելբայր, ժամանակ չու-
նիմ ամառուան յատուկ չաքէթ մը առ
նելու:

— Եկուր ես քեզի աժանկէկ չաքէթ
մը առնեմ:

— Առա՛ջ իրաւունքի մէջ պէտք է
հրատարակես որ այս ինչ յեղափոխա-
կանին չաքէթ մը կը նուիրես կոր:

— Ինչո՞ւ:

— Որպէս զի ժողովուրդը չըսէ թէ
մեր փարայովը յեղափոխական մը չա-
քէթ առեր է:

— Պօ՛շ լախըւտը, եկուր հետդ սա
ճաշարանը մտնենք մէյ մէկ քիչ բան
ուտենք աէ՛ ետքը երթանք քեզի շա-
քէթ մը առնենք:

— Ո՛վ պիտի վճարէ ճաշարանապետին.

— Հարկաւ ես պիտի վճարեմ:

— Ուրեմն դարձեալ լրագրին միջոցաւ
յայտարարելու ես որ դուն զիս ճաշա-
րան պիտի տանիս, որպէս զի ժողո-
վուրդը չըսէ թէ այն ինչ յեղափոխա-
կանը մեր փարայովը փորը կը կշտացնէ:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ադ ո՛րչափ բա-
րակ հաշուել է, մինչդեռ անդին Քիլը
կըլլած ատեննիդ այդ հաշիւները նկա-
տողութեան չէք ասնուր:

— Ֆիլը կըլլենիս մարդ չի տեսնար
ամա՛ ճաշարան մտնելով հաց ուտելինս
կը տեսնա՛յ . . .

Իւսթիւ պաշը տիւզկիւնճէ պիր տիւ-
լէնճի՝ կաղինսնն պիրինէ կիրիպ, մասա պա-
շընտա օթուրուպ գօնուշմագտա օլան իքի
ղաթլարտան սատագա իսթէր :

— Ինայէթ օլա . ուֆագլըգ եօգ :

— Աղալար , պէնիմ շիմտիքի տիւլէն-
տիղիմէ պագմայընըղ , պէն տէ պիր զէնկին
էվլատը իտիմ . էվիմիղին գաբուսը տաիմա ա-
շըգ պուլընուր իտի . հէր ագշամ միսաֆիր
գապուլ իտէր իտիք . կէճէ կիւնտիւզ զէվգ
ու սէֆա սիւրէր իտիք . նիհայէթ , պէյլէ օ-
լաճագ ատամ տէյիլ իտիք ամա՝ գատէր
պէյլէ իմիշ :

— Թարիֆ իթտիղին տէրէճէ միւս-
րիւֆիլք իթտիքտէն սօնրա՝ Բօշիլտ օլաճագ
տէյիլ իտին եա՝

— Նէ՞ օլուր , հիշ տէյիլ իսէ՝ պիր
սիկարալըգ թիւթիւն վէրինիգ :

— Թիւթիւն գուլլանմամ :

— Արգատաշընըղ գուլլանրեօր :

Արգատաշը — Պէն վէրմէմ , սէն տէ
իշմէ տէ՝ Իլմի—իտարէ էյրէն :

Ա.Զ.Դ

Այցետոմն , հասցէտոմն . նամակա-
գլուխ , հրաւիրատոմն , բարենիշ , տամ-
սակ , կայլն կայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տը-
պագրուին : Քաղաքներէ եկած յանձնա-
րարութիւնք փութով կը կատարուեն :
Գին գոհացուցիչ , Դիմել Հայելիի խըմ-
բագրութեան :

ԳԱՐԵԳԻՆ ՏԱՆԱՊԱՇԵԱՆ և ՐԱԿ
Դերձակ

Մեծ փողոց Բրէսլաւսքա , թիւ 3 Վառնա

Վայելուչ ձեւ և ընտիր կերպանդէնք :
Գոհացուցիչ գին : Վճարումին հարիւրին 25ը

կանխիկ , մնացորդն՝ շաբաթականով , երեք
ամսոյ միջոցին : Առիթէն օգտուեցէք :

— 0 —

ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ
(ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Գ . Յ . ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ . Ի . ԲԱՆՉՈՒԳ
Վառնա Ծրդ Թաղ ԵՐԼՄԸԸ Թապիս

Ամէն տեսակ մեքենաներու շինութիւն և
նորոգութիւն . ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛
պարզ ջուրով գործող մեքենաներ , նաև շո-
գեմակոյկներ , ջաղացքի վերաբերեալ ամէն
տեսակ երկաթեայ գործիքներ , զրամական
գասաներ , շէնքերու յատուկ երկաթեղէն-
ներ , տեսակ տեսակ ջրհաններ կայլն կայլն
կը պատրաստուին : Պատ . Յաճախորդք միշտ
գոհ մնացած են սոյն գործարանի շինու-
թիւններէն :

— 0 —



Գնումն և վաճառումն հին ու նոր ամէն
տեսակ նամակագրոշմերու (բուլ) . դիմել Հա-
յելիի խմբագրութեան :

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

Ռուսճուգ . Տիարը Եղբարք Սարաֆեան :
Սիլիսդրէ . Տիար Արթաքի Սարգիսեան :
Շումլա " Յովհաննէս Մաճարեան .
Սօֆիա " Յակոբ Ծերրունեան .
Գահրէ " Մ . Հունկ :
Լոնտոն " Հայկ Աստուածատուր :
Բարիզ .

Отговоренъ-редакторъ: Н. Драгулевъ.

Печатница „Взаимность“ — Варна